

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելուց (301թ.) հետո տասնամյակների ընթացքում կարևորվեց Աստվածաշնչի հայերեն թարգմանության խնդիրը¹:

Աստվածաշնչի հին հայերեն գրարար թարգմանության խնդրին նվիրված ուսումնասիրությունները ընթացել են հիմնականում երկու ուղղություններով. ա) հայերեն թարգմանության արտաքին հանգամանքները, բ) ըստ հայերեն թարգմանության քննությունը²:

Բանասիրական ուսումնասիրությունների հետ մեկտեղ կարևորվում են պատմադիտական հետազոտությունները հատկապես կապված Աստվածաշնչի ընթերցման թե՛ նախամեսոպոպյան վիճակի և թե՛ հայերեն գրաբար թարգմանության ժամանակաշրջանի հետ:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակաշրջանի, նախօրինակի, թարգմանիչների և այդ գարակազմիկ իրողությանը վերաբերող այլ տվյալների մասին հայ պատմագրության մեջ կարևորագույն սկզբնաղբյուրներն են հայ պատմիչների՝ Կորյունի, Աղաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու երկերը (V դար): Տարբեր ժամանակաշրջաններում Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը վերաբերող գանազան խնդիրների լուսաբանումը կատարվել է այս սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո մինչ Մեսրոպ Մաշտոցի կողմից գրերի ստեղծումը՝ Աստվածաշնչի ընթերցման լեզվի խնդրի մասին խոսելիս, ուշադրություն է դարձվել այն հանգամանքի վրա, թե որ լեզուն էր գրավոր շրջանառության մեջ IV դարի Հայաստանում:

1 «Սուրբ Գրքը պետք էր ըլլար անոր նախնծայ երախայրիքն ալ» (Մ. Օրմաճյան. Ազգապատմ. մասն Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 278):

2 Կ. Զարբհանյան. Մատենագարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳ). Վենետիկ, 1889: М. Тер-Мовсесян. История перевода Библии на армянский язык. СПб., 1902. Ն. Ա կ ի ն ե ա ն. Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը. — «Հանդես ամսօրյա», 1935, № 10-12, էջ 550-563: Հայր Յ. Ա լ գ ե ը. Ա կ ն ար կ մ ը Ս. Գրոց թարգմանութեան վրա. — «Բազմավեպ», 1935, № 9-12, էջ 353-384: Հ. Յ. Թ ո ռ ո ս ե ա ն. Հայ Ոսկեդարը և Աստվածաշնչի թարգմանությունը. — «Բազմավեպ», 1935, № 9-12, էջ 293-313: Ն. վ ը գ. Մ ո վ ա կ ա ն (Պ ո ղ ա ը յ ա ն). Աստվածաշնչի հայերեն հին թարգմանությունները. — «Սին», 1945, էջ 47-50, 107-112, 145-148, 1946, էջ 16-19: Գիրք Մ ն ն ո ղ ո յ, քննական բնագիր, աշխատասիրությանը Ա. Ա. Զեյթունյանի. Երևան, 1985, էջ 40:

Ըստ Ազաթանգեղոսի, «Տայր հրաման թագաւորն Տրդատ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկու-ւոյ ածել յարուեստ դպրութեան... Եւ զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կաքցեալ, և զոմանս ի հելլեն»³: Ուստի ժամասացութ-յունն ու ընթերցումն⁴ը Ս.Գրքից հասկանում էին միայն նրանք, ովքեր այդ լեզուներով կրթություն էին ստացել: Փափստոս Բուզանդը գրել է. «...Ջկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց... ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ զհանգա-մանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին, այլ խառնադանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և շինակա-նութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանու-թեան ամպոցն իբրև գյորդահեղեղ ինչ անձրևաց սաստկութիւն զվարդա-պետութիւնն ՚ի վերայ հոսէին, ոչ ոք ՚ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ՚ի մտի»⁵: Վիճակը նույնն էր նաև Մեծն Ներսեսի (353-373 թթ.) ժամանակ: Նա Հայաստանի բոլոր գավառներում, զանազան տեղերում կարգել էր դպրոցներ հունարեն և ասորերեն լեզուներով⁶: Այս իրավիճակով էր պայմանավորված, որ Մեսրոպ Մաշտոցը «ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն»⁷: Մաշտոցն «եկեալ հասեալ ի գունն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանանացն»⁸: Հայոց Արշա-կունյաց պալատում գրավոր լեզուները նույնպես եղել են հունարենը և ասորերենը, ինչպես հաղորդում է Ղազար Փարպեցին, երբ գրելով ինսուրով արքայի (385-388 թթ., 414 թ) պալատում Մաշտոցի «յերամ մատենագիր արքունի դպրացն» կարգվելու մասին, նշում է, որ «ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց արքունի դպիրքն, զվճռոցն և զհրովարտակացն»⁹:

Եկեղեցական ծիսակարգում ևս շրջանառության մեջ էին հունարե-նը և ասորերենը: Մովսես Խորենացին դրել է. «Յայնժամ զիր դպրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականան վարէին եկեղեցւոյ կարգք»¹⁰: Ղա-զար Փարպեցին նշել է. «Պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք դրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս...»: Թե ինչ դժվարությունների առջև էր կանգնում ժողովուրդը այդպիսի վի-ճակից, ևրևում է Ղազար Փարպեցու շարադրանքի շարունակությունից:

3 Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տփղիս, 1909, էջ 437-438:

4 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս էած Բ.Պատկանյան. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 29:

5 Նույն տեղում, էջ 65:

6 Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին.— Կ ո ռ յ ու ն. Վարք Մաշտոցի. բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմ., առաջաբանով և ծան. ի ձեռն Մ. Արեղյանի. Երևան, 1980, էջ 36:

7 Նույն տեղում:

8 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Գ.Տէր-Մկրտչեան և Ստ.Մալխասեան. Տփղիս, 1904, էջ 13:

9 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան, Ս. Յա-րութիւնեան. Տփղիս, 1913, էջ 301:

«...յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորոյ»¹⁰:

Կարելի է տեսնել, որ խորենացին, որպես եկեղեցական կարգը վարելու լեզու, շեշտը դնում է հունարենի կիրառման վրա: Նա նույնպես խոսում է ասորերենի, սակայն, որպես պարսիկների կողմից (Մեծ Հայքի թագավորութեան պարսկա-բյուզանդական ռաժանուծից հետո) պարտադրված լեզվի մասին: Իսկ մինչ այդ եղած դեպքերին անդրադառնալով՝ Մովսես խորենացին գրել է, որ «Քրիստոսից ուրացող» Մեհրուժան Արծրունին Արշակի մահվանից հետո, Շապուհ II-ից զորք ստանալով, դալիս է Հայաստան: Հատուկ հանձնարարութիւններ ունենալով պարսից արքայից: Վերջինս «խոստացել» էր նրան տալ Հայոց թագավորութիւնը, «միայն թէ զնախարարսն նուաճելով ի դէն մագդեգանց զաշխարհս դարձուցէ»¹¹: Մեհրուժանը երկրին շատ այլ չարիքներ պատճառելու հետ մեկտեղ «գամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել: Զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ յերկիրն Պարսից տայր տանել: Եւ զորս միանգամ դիրս դտանէր՝ այրէր, և հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ զպարսիկ, և մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել, այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենևին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ խափանել զքրիստոնէութեան ուսումն»¹²: Ինչպես տեսնում ենք, Մեհրուժանը փորձ է արել նույնիսկ պարսկերեն դպրութիւն ուսուցանել հունարենի փոխարեն: Այդ արվում էր հայերին մագդեգականութիւն պարտադրելու համար ի կատարումն Շապուհի հրամանի, ավերվում էին եկեղեցիները և ատրուշաններ շինվում¹³:

Խորենացին գրել է, որ դպրութիւնը Հայաստանում հունարեն լեզվով էր և միայն բաժանուծից հետո երկրի արևելյան մասում պետք է լինէր ասորերեն. «Դարձեալ ի ռաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի»¹⁴: Իսկ այդ նշանակում է, որ խորենացու հաղորդումը իր բովանդակութեամբ համահունչ է Ղազար Փարպեցու վերոհիշյալ հաղորդմանը ասորերենի մասին, քանզի նոր չէր, որ պետք է կիրառվէր ասորերեն դպրութիւնը, այլ այն միայն պարտադրվելու էր պարսիկների կողմից, քանի որ քաղաքական տեսանկյունից հունարենը Պարսկաստանի համար թշնամական երկրի՝ Հռոմեական կայսրութեան լեզուն էր համարվում: Ավելին, Վուստանյանի օրոք արքունի դպրատանը նույնիսկ պարսկերենի կիրառման մասին է հիշատակել Պատմահայրը. «...զի մինչ զնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց դտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին դրով»¹⁵:

10 Ղ ա զ ա Ր Փ ա Ր պ ե ց ի, էջ 13:

11 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 301:

12 Ն ու յ ն տ ե ղ ու մ:

13 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, էջ 150-151: Միառժամանակ անց «Մուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն, և աւերէր զատրուշանսն մագդեգանցն» (նույն տեղում, էջ 157):

14 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 329:

15 Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 325:

Փարպեցու վերոհիշյալ հաղորդումից հետևեց, որ խոսրովի պալատում գրավոր լեզուներն էին ասորերենը և հունարենը: Իսկ խոսրով թագավորը Մեծ Հայքի թագավորության գահին էր բարձրացել 385 թ., երբ Արշակ III-ը ստիպված հեռացավ երկրի արևմտյան մասը, ինչով և սկսվեց պարսկա-հռոմեական բաժանումը¹⁶: Ուստի, բաժանումից հետո ևս հունարենն ու ասորերենը Հայաստանում մնացին որպես գրավոր օգտագործվող լեզուներ, սակայն ըստ պատմիչների, արևմտյան մասում հունարենի, իսկ արևելյան մասում՝ ասորերենի կիրառումը¹⁷:

Պատմիչների հաղորդմամբ, հայերեն գրի բացակայության պայմաններում հայ հոգևորականները, մինչև IV դարի վերջը, քրիստոնեական արարողությունները կատարելիս, ստիպված էին բավարարվել բանավոր քարոզով: Փաստորեն հայոց թարգմանչական գործը սկսվել էր դեռևս ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակներից: Տրգատ թագավորի հրամանով հիմնված հելլեն և ասորի դպրոցներում, ամենայն հավանականությամբ, պատրաստում էին նաև թարգմանիչներ, որոնք մասնագիտանում էին այլ լեզուները ընթերցման մեջ¹⁸: Այգապիսի երևույթի վկայությունն է Մովսես խորենացու հաղորդումը Մաշտոցի քարոզչական գործունեության մասին. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխուլ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եղ ի մտի հնարել դտանել նշանադիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր»¹⁹:

Աստվածաշնչի գործածության լեզվական դժվարության խնդիրը մինչ գրերի գյուտը լուծվում էր, կարելի է ասել, հունարենից և ասորերենից բանավոր թարգմանիչներ պատրաստելու միջոցով²⁰: Մեսրոպ Մաշտոցը դեռևս արքունի պալատում եղած ժամանակ արդեն իսկ խորամուխ էր

16 է. Լ. Դանիելյան. Հայաստանի բաժանման տարեթիվը 387 թե՛ 385. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊՀ), 1980, № 1, էջ 203-214:

17 Հ. Մարկավարտ. Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը. — Մեսրոպ Մաշտոց, հոգևածների ժողովածու. Երևան, 1962, էջ 123:

18 Հ. Մանանդյանը նշել է, որ ամբողջ IV դարի ընթացքում հայերի մոտ գոյություն են ունեցել Աստվածաշնչի մասնակի թարգմանություններ բանավոր հաղորդմամբ (Հ. Մանանդյան. Մեսրոպ Մաշտոցը և Հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար. — Մեսրոպ Մաշտոց, հոգևածների ժողովածու, էջ 45):

19 Սարգսյանը նշել է, որ մինչև Հայ գրերի ստեղծումը, քրիստոնյա քարոզիչները Հայաստանում, որպեսզի հասկանալի լինեին ժողովրդին, իրենց քարոզները, որոնք կազմված էին հունարեն և ասորերեն լեզուներով, ստիպված էին բանավոր թարգմանել հայերեն, այսինքն, փաստորեն մի լեզվով գրված տեքստը ունկնդիրների առջև կարդում էին այլ լեզվով (М о в с е с Х о р е н а ц и. История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна, Ереван, 1990, с. 261, прим. 675):

19 Մովսես խորենացի, էջ 317:

20 Կարելի է ասել, որ Հայ եկեղեցում գոյություն է ունեցել թարգմանիչների հատուկ դաս, որը բանավոր թարգմանել և ժողովրդին է հասցրել Ս. Գրքի օտարալեզու ընթերցումները (տե՛ս Մ. Օրմանեան. Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկա կացությունը. Կ. Պոլիս, 1912, էջ 33): Գ Սարգսյանը մի թե՛գ է առաջադրել, Համաձայն որի, մինչմեսրոպյան ժամանակաշրջանում, նախքան հայերեն գրերի ստեղծումը, կանոնական տեքստերը հետերոնկնիկ կերպով՝ այսինքն այլալեզու են ընթերցվել կամ արտասանվել, ինչը արտահայտվում էր բնագրից հայերեն բանավոր թարգմանություններով (Г.С а р к и с я н. К предьстории армянской письменности. — Кавказ и Византия. Ереван, вып. 2, 1980, с. 18):

եղել Աստվածաշնչի ընթերցանության մեջ, ինչպես գրել է Կորյունը. «Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս»: Մեսրոպ Մաշտոցը հունարեն լեզվով էր կարգում Աստվածաշունը քանզի «վարժեալ հելլենական դպրութեամբն»²¹:

Հունարեն և ասորերեն դպրության համակարգը, որով Հայաստանում տարվում էր ուսուցումը, նպաստում էր հայերեն բանավոր թարգմանության արվեստի կատարելագործմանը: Սակայն նաև սլարգ է, թե ինչպիսի դժվարութիւններ կարող էր առաջացնել բանավոր թարգմանութիւնը, և բացի այդ հնարավոր էր ունենալ մեծաքանակ հմուտ թարգմանիչներ, որոնք կկարողանային աստվածաշնչյան խոսքը ժողովրդին հասցնել իրեն հասկանալի և ընկալելի լեզվով ամբողջ Հայաստանում: Առանց հաստատուն գրավոր խոսքի անհնար կդառնար Աստվածաշնչի համամասն թարգմանական ընթերցումը Հայաստանում: Աստվածաշնչի հայերեն թարգմանութիւնը դարձել էր ժամանակի անհապաղ լուծում պահանջող խնդիրը:

Գրերի գյուտից հետո հայ ժողովրդի հոգևոր հայրերը՝ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթև կաթողիկոսը, իրենց աշակերտների մասնակցութեամբ ձեռնարկեցին Աստվածաշնչի թարգմանական գործը, որն ընդգրկել է V դարի առաջին տասնամյակները: Այս ժամանակաշրջանում Աստվածաշնչի թարգմանության ընկալյալ բնադիրն ընդունեց իր վերջնական տեսքը և ստեղծվեց սրբագրված օրինակը²²: Ելնելով պատմիչների վկայութիւններից՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության իրականացման գործընթացը կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլը ընդգրկում է գրերի գյուտին հաջորդած ժամանակաշրջանը, իսկ երկրորդը (բաղկացած երկու ենթափուլերից)՝ Եփեսոսի Տիեզերական երրորդ ժողովին (431թ.) հաջորդած տարիները:

Ա. Գրքի թարգմանության նախընթացի մասին մանրամասն պատմել է Կորյունը: Մեսրոպ Մաշտոցը, հայերեն գրերը ստեղծելուց հետո, ժամանելով Կոնստանդնուպոլիս քաղաքը, իր աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի թարգմանութեանը՝ սկսելով Սողոմոնի առակներից. «Եւ եգեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զրանս հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանգերձ ուսուցանելով զմանուկս գրիչս նմին դպրութեան»²³:

21 Կ ո Ր Ե Մ Ո Ւ Ն, էջ 84:

22 Ամփոփելով եղած կարծիքները Աստվածաշնչի թարգմանության մասին, Լ.Տեր-Պետրոսյանը գրել է. «Բոլոր հետազոտողները համամիտ են այն հարցում, որ Աստվածաշունչը հայերեն է թարգմանվել Ե գարի սկզբին և որոշ ժամանակ անց խմբագրվել ըստ ձեռք բերված ստույգ հունարեն օրինակների» (Լ. Տ ե Ր - Պ ե տ Ր ո ս յ ա ն. Սողոմոնների հայերեն թարգմանութիւնը և նրա նախորդները. - «Էջմիածին», Ա, 1975, էջ 44): «Ապացուցված պետք է համարել, որ հայկական Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը ներկայացնում է V դ. 30-ական թթ. լեզվական վիճակը... Այդ թվականներին ստանալով իր վերջնական տեսքը, հայերեն թարգմանութիւնը այլևս չի ենթարկվել արմատական սրբագրութեան» (Գիրք Ծննդոց, քննական բնագիր, էջ 34-35):

23 Կ ո Ր Ե Մ Ո Ւ Ն, էջ 98:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ չնայած Եղեհիայում՝ իր կողմից ասորական դպրության կարգված աշակերտների խմբի հետ եղած ժամանակ Մաշտոցը «հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիւղորայիւք կապօք», այնուամենայնիվ Աստվածաշնչի թարգմանության գործին ձեռնամուխ եղավ Սամոսատում, ուր նա եկավ իր կողմից հունական դպրություն ուսանելու ուղարկված աշակերտների մոտ: Հունարենից թարգմանության մասին է վկայում նաև այն փաստը, որ Մեսրոպ Մաշտոցի հայերեն թարգմանությանը Սողոմոնի Առակների առաջին տողը գրվեց Հռոփանոս անունով գրագրի ձեռքով, որին Մովսես Խորենացին բնութագրել է՝ «հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան»²⁴: Եթե, ըստ Կորյունի, Մեսրոպ Մաշտոցը Աստվածաշնչի թարգմանությունը սկսելով Սամոսատում, այնուհետև Հայաստանում ավարտել է Սահակ Պարթևի մասնակցությամբ, ապա Ղազար Փարպեցու հաղորգմամբ Ս. Գրքի հունարենից առաջին թարգմանությունը հայերեն կատարել է Սահակ Պարթևը: Կորյունի շարագրանքի «գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի» արտահայտությունը Մ. Օրմանյանը իրավացիորեն կապել է Հռոփանոսի հետ և Մեսրոպ Մաշտոցի՝ Հովհան Եկեղեցացու ու Հովսեփ Պաղնացու օգնությամբ Ս. Գրքի առաջին թարգմանած կտորի՝ Առակաց գրքի գրիչը նշել է Հռոփանոսին²⁵: Այսպիսով, Կորյունի հաղորդումներից հետևում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության սկիզբը դրվել է հունարեն լեզվից թարգմանությամբ:

Մեսրոպ Մաշտոցը, վերադառնալով Հայաստան, ինչպես նշել է Կորյունը, ծավալում է թարգմանչական բուն գործունեությունը Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի հետ միասին. «Եւ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել... Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»²⁶: Վաղարշապատ վերադառնալուց հետո, ըստ Կորյունի, նախ Նոր Կտակարանը սկսեցին թարգմանել «երկուց հաւասարելոցն», այսինքն՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ձեռքով իրականացավ Ս. Գրքի՝ Հին Կտակարանի («օրէնսուսոյց Մովսէս մարգարեական դասուն») և Նոր Կտակարանի («յառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդովն հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանաւն Քրիստոսի») հայերեն առաջին ամբողջական թարգմանությունը, ինչի մասին վկայում է Կորյունի ևս մեկ հաղորդումը, որի վրա այս առումով պատշաճ ուշադրություն չի դարձվել: Պատմելով Եփեսոսի ժողովին հաջորդած դեպքերի մասին՝ Կորյունը, անդրադառնալով դրան նախորդող ժամանակաշր-

24 Մ ո վ ս ե ս Խ ո ռ ե ն ա ց ի, էջ 327:

25 Մ. Օ Ր մ ա ն ե ա ն, նշվ. աշխ., էջ 278:

26 Կ ո Ր յ ու ն, էջ 102, 104:

Ջանին, հիշատակել է. «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ես զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն»²⁷:

Մ. Աբեղյանը «զեկեղեցական գրոց գումարութիւն» արտահայտութիւնը ծանոթագրել է որպէս «եկեղեցական գրքեր», նշելով, որ դրանք, «ինչպէս ընդունում են, եկեղեցում ժամասացութեան ժամանակ գործածված գրքերն են. ժամագիրք, պատարագամատուց, տոնական, որոնց հիմնական մասերը հին են»²⁸: Սակայն անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել Կորյունի երկի սկզբնամասի հետևյալ հաղորդման վրա. «Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուրի մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով հնչեցուցեալ...»²⁹: Կորյունի հաջորդ շարագրանքից՝ Հին Կտակարանի Ելից գրքից հայտնի Մովսէս մարգարեի աներոջ՝ Հոթորի (Ելք, ԺԸ, 17-23), Նոր Կտակարանի Աստծո Միածին Որդու երանութիւնների (Մատթեոս, Ե, 3-11) «զյառաջամուտ Կարապետի»՝ Հովհաննէս Մկրտչի (Մարկոս, Ա, 2), Քրիստոսի տասներկու առաքյալների (Մատթեոս, Ժ, 2-5), Նաթանայելի (Յովհաննու, Ա, 47), յուրի մի շիշ բանեցնելու (Մատթեոս, ԻԶ, 7-13), քանանացի կնոջ հավատքի (Մատթեոս, ԺԵ, 28), երկու գանկի ընծայողների գովեստի (Ղուկաս, ԻԱ, 1-4), Տիրոջ կողմից Պողոսին «անօթ ընտրութեան» անվանելու (Գործք, Թ, 15), Աստծո շնորհքը ամեն բանի մեջ հուշակելու (Բ Կորնթացւոց, Բ, 14), Աստծո ընտրյալների անբիծ լինելու (Հռոմայեցւոց, Ը, 33), «Կաթողիկէ առաքելոցն»՝ Հակոբ, Պետրոս, Հովհաննէս, Հուգա առաքյալների ընդհանրական թղթերի (և այլնի մասին) հետևում է, որ վերոհիշյալ «եկեղեցական գրոց» արտահայտութիւնը վերաբերում է Մ. Գրքին³⁰: Ուրեմն այս տեսանկյունից պետք է մոտենալ «եկեղեցական գրոց գումարութիւնն» արտահայտութեանը: Ինչի մասին վկայում է նաև Հին Կտակարանին նվիրված Հերոնիմոսի (IV դ.) երկի V գարում կատարված թարգմանութեան մեջ հիշատակվող «գումարութիւն» բառը³¹:

Կորյունի հաղորդմանը համահունչ են Մեսրոպ Մաշտոցի ն վերադրող Մովսէս Խորենացու հետևյալ տողերը. «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր Կտակս յեղու ի հայ բան, նա և աշակերտք նորա Յոհան Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացի, միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն»³²:

27 Նույն տեղում, էջ 124: Գրաբար բնագրի «զճշմարիտ» բառը աշխարհաբար և անգլերեն թարգմանութիւններում բաց է թողնված (նույն տեղում, էջ 125, 291), իսկ ուսերենում ճիշտ է թարգմանված «ИСТИННЫЕ» (էջ 214):

28 Նույն տեղում, էջ 323, ծան. 124: «Հայրապետաց սրբոց զճշմարիտ իմաստութիւնն» արտահայտութիւնը Մ. Աբեղյանը բացատրել է որպէս «եկեղեցական բարձրագույն աստվածաբանական գիտութեան գրքեր» (էջ 323, ծան. 125):

29 Նույն տեղում, էջ 76:

30 Նույն տեղում, էջ 76-78:

31 Յերոնիմեայ Վասն ի քսան և յերկուս գիրս առ ի հերոյայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ. Վիեննա, 1920, էջ 66-76: Տե՛ս նաև Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք երկմասնեայ. մասն Ա, ժամանակագրութիւն պատմական, ի Վենէտիկ, 1818, էջ 125:

32 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 327:

Հերոնիմոսի և Եփեսոսի հաղորդումներից հետևում է, որ «քսան և երկու գրքերի գումարությունը» Հին Կտակարանին էր վերաբերում, և խորենացին դրանք նշել է որպես «յայտնիսն»³³ և դրանց հետ հիշատակել նաև Նոր Կտակարանը: Ա. Մուշեղյանի կարծիքով, այն հետևությունը, թե Մաշտոցը չէր կարող Ասորիքում գտնված միջոցին թարգմանել ամբողջ Աստվածաշունչը, բխում է «յեղուլ» բայի սխալ ընկալումից: Քանզի, ըստ հետազոտողի, «Մեսրոպն Ասորիքում ոչ թե թարգմանել, այլ հայերենի է փոխադրել, այսինքն՝ համառոտակի շարադրել Հին և Նոր Կտակարանները, անշուշտ, ուղեցույց ունենալով Տատիանոսի կազմած չորս ավետարանների ասորերեն Դիատեսարոն (քառապատում) կամ «խառն» կոչված համաբարբառը, որը մինչև 431 թվականի Եփեսոսի ժողովը լայն գործածություն մեջ էր Եդեսիայում, Մծբինում և նրանց շրջակայքում»: Եվ քանի որ Հին և Նոր Կտակարանների լիակատար թարգմանությունը պահանջում էր երկարատև տքնաջան աշխատանք, ուստի, ինչպես Ա. Մուշեղյանն է եզրակացրել, Հայ եկեղեցու առաջնորդները հոգ տարան նորագույն Հայ գրերով և Հայոց լեզվով նախ և առաջ ստեղծելու փոքրածավալ, առձեռն Աստվածաշունչ Մեծ Հայքի բոլոր եկեղեցիներում քրիստոնեությունը քարոզելու որպես համակարգված ուսմունք դպրոցներում ուսուցանելու համար: «Յեղուլ» բայի՝ Ա. Մուշեղյանի առաջադրած վարկածի առումով խորենացու հաղորդման մեկնությունը նոր լույս է սփռում Մեսրոպ Մաշտոցի դրական գործունեության վրա: Եթե Կորյունի հաղորդումներից հետևում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության սկիզբը դրվել է հունարենից, ուրեմն Տատիանոսի կազմած ասորերեն Diatessaron-ի՝ հիշատակությունը պետք է դիտել ոչ թե որպես թարգմանության հիմք, այլ «ուղեցույց», ինչպես և նշել է հետազոտողը:

Կորյունի մոտ Հին Կտակարանի «քսաներկու գրերի գումարությունը» և Նոր Կտակարանը նշված են միասին, որպես «գեկեղեցական գրոց գումարություն»: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Կորյունը նախ, հիշատակելով Հին Կտակարանից՝ Սողոմոնի Առականի թարգմանությունը, այնուհետև միևնույն փաստին՝ Հին և Նոր Կտակարանների թարգմանությանը երկու անգամ է անդրադարձել: Նա նախ նշել է, որ Աստվածաշունչը թարգմանվել է երկու հավասարակիցների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ձեռքով, իսկ այնուհետև, նկատի ունենալով հաջորդականությունը, գրել է, որ Սահակը առաջ հունարեն լեզվից հայերեն էր դարձրել «գեկեղեցական գրոց գումարությունն»:

Աստվածաշնչի թարգմանության մասին Ղազար Փարպեցին գրել է. «Ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց հանդերձ ե-

33 Ա. Մուշեղյանը «յայտնիսն» բառը համարել է հապավված և այն ուղղել «յայտնությունն», նշելով, որ խորենացին «քսաներկու հայտնությունները» ասելով նկատի է ունեցել Հին Կտակարանի կանոնական գրքերը՝ խմբագրված եբրայական քսաներկու նշանագրերով (Ա. Մ ու շ ե ղ յ ա ն. Մեսրոպ Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը. - Միջազգային գիտաժողով «Աստվածաշնչական Հայաստան», գեկուցումների դրույթներ, Օշական, 1999, էջ 92):

34 Նույն տեղում, էջ 93:

35 Տատիանոսը չորս ավետարաններից քաղվածորեն կազմեց մի ավետարան ասորերեն լեզվով «Աւետարան ըստ չորից»-Diatessaron (ե Ր ու ա ն գ վ ա Ր դ ա պ ե տ S է Ր - Մ ի ն ա ս ե ա ն ց. Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորոց եկեղեցիների հետ. Ս. Էջմիածին, 1908, էջ 4):

րանկեան Մաշտոցի և ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտերօք առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, և հանդերձ թագաւորաւն սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր և թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս»³⁶: Սահակ Պարթևին դիմելու անհրաժեշտութիւնը Ղազար Փարպեցին բացատրել է նրանով, որ «երանելին Մաշտոց և որ ընդ նմա պատուական քահանայքն էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառս, վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգից յունարէն ուսմանն»³⁷: Թվում է, թե Փարպեցին այս միտքը արտահայտել է հիմնվելով Կորյունի վերոհիշյալ այն հաղորդման վրա, թե Սահակն էր թարգմանել Աստվածաշունչը հունարենից հայերեն: Փարպեցին գրել է, որ Սահակ Պարթևը «կամաւոր յօժարութեամբ ետ զանձն ի գործ, պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան, և անվեհեր ջանալով զցայգ և զցերեկ՝ թարգմանեաց զկտակարանս ամենայն, զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք սուրբ Հոգևոյն, և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն զլուսաւոր և զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգևով»³⁸: Կարելի է տեսնել, որ հիշատակված թարգմանութիւնը համապատասխանում է Կորյունի հիշատակած «զեկեղեցական գրոց գումարութեանը»: Ղազար Փարպեցին հպանցիկ հիշատակել է ևս մեկ թարգմանութեան մասին: Վկայակոչելով 16-րդ սաղմոսի 14-րդ տունը, Փարպեցին նշել է. «Որ և զմնացորգս ժահահոտ չարահամ խորտկին իւրոց եթող զաւակին իւրում, ըստ գրեցելումն ի վեշտասաներորգումն սաղմոսին. «Յագեցան կերակրօք, ասէ,-որ միւս ևս թարգման խոզենեալ ասէ,-և թողին զմնացուածս տգայոց իւրեանց»³⁹:

Մովսես Խորենացու հաղորդումը իր բովանդակութեամբ ավելի մոտ է Կորյունի հաղորդմանը, այն նաև վկայում է Մեսրոպ Մաշտոցի Հայաստան վերագառնալուց Հետո Ս. Գրքի առաջին ամբողջական հայերեն թարգմանութեան ավարտին Սահակ Պարթևի ունեցած մասնակցութեան մասին: Ուստի Խորենացու մոտ հնարավոր է, որ միահայուսված են արտահայտվել Կորյունի հաղորդումները Աստվածաշնչի թարգմանութեան ընթացքի մասին՝ նախ Սամոսատում Հին Կտակարանի մասնակի թարգմանութեան, այնուհետև Մեծ Հայքի թագավորութիւն վերագառնալուց Հետո՝ Ավետարանի թարգմանութիւնը սկսելու և վերջապես Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կողմից Աստվածաշնչի ամբողջական թարգմանութեան վերաբերյալ:

36 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 36:

37 Նույն տեղում, էջ 36:

38 Նույն տեղում, էջ 17:

39 Նույն տեղում, էջ 41: Ինչպես նշել է Լ. Տեր-Պետրոսյանը, «Սաղմոսների մեզ հասած հայերեն բնագիրը անտարակույս թարգմանված է հունարենից» (Լ. Տ Ե Ր - Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն. Նշվ. աշխ., էջ 44): Փարպեցու նշած «խողենալ» տարրն թերցվածի առնչությամբ նշել է, որ «կարող էր փութանակի թարգմանութիւնից բխել, քանի որ սրան ժամանակագրական ոչ մի հանգամանք չի հակասում» («Էջմիածին», Թ, 1975, էջ 56): Հմմտ. Պ. Մ ո լ ր ա դ յ ա ն. Ղազար Փարպեցու մի տեղեկութեան պատմամշակութային նշանակութիւնը. - «Էջմիածին», 1980, N1, էջ 54-57):

Ի՞նչը կարող էր պատճառ հանդիսանալ Ղազար Փարպեցու այն հաղորդմանը, թե միայն Սահակ Գարթևն է իրականացրել Ս. Գրքի թարգմանությունը հունարենից: Այս հարցի պատասխանը փորձել է տալ Հ. Մարկվարտը: Նա գրել է. «Սահակով հմայված Ղազարն ուզում է Սահակին վերագրել ոչ միայն Աստվածաշնչի թարգմանության, այլև նույնիսկ հայ գրերի գլխավոր վաստակը: Իսկ սրա համար բնականաբար պետք է, որ դեպքերի վայրը տեղափոխվեր Հայաստան և Մաշտոցից խլվեր արդարություն վաստակված փառքի վաստակը: Ղազարն արժանի է սաստիկ կշտամբանքի՝ իր կատարած այս փորձի համար, մի փորձ, որ կարելի է բնորոշել որպես պատմական փաստի աղավաղում»⁴⁰: Կարելի է միայն ափսոսալ, որ հետազոտողը Ղազար Փարպեցուն մինչ այսպիսի ծանր մեղադրանքներ ներկայացնելը, ուշադրություն չի դարձրել պատմիչի՝ Կորյուն վարդապետի գրքի վրա հիմնված Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը նվիրված ընդարձակ շարադրանքին: Օրինակի համար կարելի է նշել մի քանի հատված Ղազար Փարպեցու երկից. «Ի ժամանակս սորա (Վուսնապուհ-Ն.Դ.) թագաւորութեանն տուաւ շնորհ հոգողութեան յամենախնամէն Աստուծոյ առն միում ճշմարտի՝ Մաշտոց անուն կոչեցելոյ... Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարգացեալ տեղակասցի զվարս կենաց նորա և գիր հայերէն նշանագրացն... Զօրացեալ ի սուրբ Հոգւոյն յորդորմամբ և եկեալ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս... Եւ մտեալ սրբոյ կաթողիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելաւն Մաշտոցիւ առ թագաւորն Վուսնապուհ և իմացուցեալ նմա զպէտս իրացն... Ինքնին Մեսրոպ իջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք... անցանէ յԵղեսիա... Յայնժամ Մեսրոպրայ օգնականութիւն ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փյունիկէ՝ ի Սամոս դիմէ»⁴¹ ... և յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռոփանոսիւ, կերպարանաձեւեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպրայ, փոխատրելով զհայերէն արժութայսն ըստ անսայթաքութեան սիղոբայիցն ի հելլենացւոյն...»⁴²:

Մ. Օրմանյանը, բացարձակ վստահություն ընծայելով Ղազար Փարպեցու հաղորդմանը, նույնիսկ որոշ թերահավատություն է ցուցաբերել Կորյունի և Մովսես Խորենացու հաղորդումների հանդեպ կապված Ս. Գրքի թարգմանության հետ: Նա գրել է. «Բայց մենք կը կարծենք, որ ոչ այբուբենի առաջին թերի կազմության ատեն Սուրբ Գրքեն բան մը թարգմանված չըլլա, և ոչ ալ Սամոսատի մեջ կանոնավոր թարգմանություն լրացնել հնարավոր եղած ըլլա: Հավանաբար ուզած են միայն նորոգ կազ-

40 Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 153:

41 Ղազար Փարպեցին (էջ 13-15) այս հատվածում, բառացիորեն հետևելով Խորենացուն (էջ 327), հիշատակել է Փյունիկեն և Կոմագենեի Սամոսատ քաղաքի (տե՛ս Ս. Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 73) փոխարեն՝ Սամոս կղզին, որը գտնվում է Էգեյան ծովում: Գ. Խ. Սարգսյանը Սամոսի հիշատակությունը Խորենացու մոտ շփոթմունք է համարել (М о в с е с Х о р е н а ц и. նշվ. աշխ., ծան. 692, էջ 261-262). Սամոսատը Կոմագենեում և Սամոս կղզին հիշատակված են Ստրաբոնի «Աշխարհագրությունում» (S t r a b o, XIV, 1, 13-14; 2, 29):

42 Նույն տեղում, էջ 28-34:

մակերպության արդյունքը փորձել, ինչը որ բնական էր, և Առակաց գիրքին թարգմանությունն են ըրած: Ըստ այսմ ինորենացիին հիշատակած ամբողջ Աստվածաշնչի թարգմանությունը, Սամոսատի մեջ եղածն պետք է գտել, և ընդհանուր կերպով գիրի գյուտեն առաջ եկած արդյունքի պես իմանալ: Ավելի որոշ պարագաներով կը պատմե Փարպեցին Ս.Գրոց թարգմանության գործը»⁴³: Այնուհետև Մ.Օրմանյանը մանրամասնորեն վերապատմել է Ղազար Փարպեցու շարագրանքը Սահակ Պարթևի ջանքերով Ս.Գիրքը թարգմանելու մասին: Մ.Օրմանյանը եզրակացրել է. «Առաջ բերված կտորներուն ընդհանուրությունն հայտնի կը տեսնվի, որ երկու թարգմանություններ եղած են ժամանակին, մին Մեսրոպե, իբր սկզբնական փորձ և մյուսը Սահակե իբր վերջնական գործ»⁴⁴: Մ.Օրմանյանը զնահատելով Հայ ժողովրդի հոգևոր հայրերի կողմից արված հսկայածավալ գործը կապված Աստվածաշնչի թարգմանության հետ, նրանցից յուրաքանչյուրին հատկացրել է իր ուրույն տեղը այդ գործում:

Հայ պատմագրության մեջ Աստվածաշնչի թարգմանության երկրորդ փուլը թվագրվում է Եփեսոսի Տիեզերական ժողովից (431թ.) հետո: Այս շրջանում բավականին բարդ կացություն էր Հայաստանի թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր կյանքում: Հայ Արչակունիների թագավորության անկումից (428թ.) հետո Ասսանյանները հաջորդ երկու տասնամյակների ընթացքում փորձեցին հայ ժողովրդին ամեն կերպ պարտագրել իրենց պաշտոնական կրոնը՝ զրադաշտությունը⁴⁵:

Աստվածաշնչի և դավանաբանական դրականության թարգմանությունը նաև կարևորվում էր Տիեզերական (ընդհանրական) եկեղեցու ճշմարիտ գավառանքի ուսուցմանն ու պաշտպանությանն ուղղված Հայ եկեղեցու հայրերի ջանքերի կենտրոնացումով ազգային ինդիվիդուալ լուծելու տեսանկյունից: Տիեզերական եկեղեցին այս ժամանակաշրջանում ալեկոծվել էր Նեստորի հանդես դալով: Խորենացու բնութագրմամբ, «ամբարիշտն Նեստոր հայհոյեաց զամենասուրբ կոյսն՝ մարդածին լինել և ոչ աստուածածին: Քանզի ծնեալն ի նման է առեալ սկիզբն՝ այլ որդի ասէր շնորհօք ի Մարիամայ, և այլ որդի ի Հօր է յառաջ քան զյաւիտեանս. որպէս զի լինել երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի»⁴⁶: Այդ իրադարձությունների ժամանակակից ինորենացու վրդովմունքը արտացոլում էր այն հուզմունքը, որը համակել էր Հայ եկեղեցու նվիրյալներին, ինչի մասին վկայում են նաև դավանանքային հարցերի շուրջ Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի թղթակցությունները Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքի, Կյուրեղ Աղեքսանդրացու և Ակակ Մելիտինացու հետ: Այդ մասին տեղեկանում ենք Մովսես Խորենացուց. «Եւ վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի մեծն Սահակ և Մեսրոպ՝ գրեն առ նոսա Կիւրեղ Աղեքսանդրացի եւ Պրոկղոս Կոստանդնուպոլսի և Ակակ Մելիտինեայ

43 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 279:

44 Նույն տեղում, էջ 279:

45 Մովսես Խորենացի, էջ 137: Եղիշ է. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի երևան, 1989, էջ 12: Արտաշատի ժողովը (449թ.) և Ս. Վարդանանց պատերազմը (451թ.) հայ ժողովրդի պատասխանն էր Ասսանյանների ուժացնող քաղաքականությանը (Եղիշ է):

46 Մովսես Խորենացի, էջ 342:

եպիսկոպոսք զդուշացուցանելով զնոսա. քանզի լուան. եթէ ոմանք ի չարափառացն աշակերտաց առեալ զգիրսն Թէոդորոսի Մամուկետացույ, զվարդապետին Նեստորի. և զաշակերտին Թէոդորի՝ զնացին աշխարհն Հայոց»⁴⁷: Ե. Տեր-Մինասյանը ուշադրութիւն դարձնելով վերոհիշյալ թղթակցութիւններին⁴⁸ վրա, գրել է. «Ընդհանրական Եկեղեցու մեծ պայքարը դավանանքի համար Ե դարում, կարելի է ասել բոլորովին աննկատելի էր անցել Հայոց Եկեղեցու համար»⁴⁹: Սակայն հենց այդ թղթակցութիւններին փաստը վկայում է հակառակը, ուստի պետք է համաձայնվել այն տեսակետին հետ, որի համաձայն. «Հայ Եկեղեցին Ե դարի հենց սկզբից անտարբեր չէր դավանական հարցերի նկատմամբ և դավանական պայքարն ընդհանրական Եկեղեցու ներսում, հատկապես Եփեսոսի Տիեզերական ժողովից հետո աննկատելի չի անցել մեր Եկեղեցու համար»⁵⁰:

Նորենացին, անդրադառնալով Եփեսոսի ժողովին, այնուհետև գրել է. «Ապա եկեալ թարգմանիչքն մեր, զորոց զանուանսն յիշատակեցաք յառաջագոյն»⁵¹ գտին զմեծն Սահակ եւ զՄեսրոպս յԱշտիշատ Տարօնայ, եւ մատուցին զթուղթսն եւ զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ և զստոյգ օրինակս Գրոց»⁵²: Այս ժամանակաշրջանում սկսվում է Աստվածաշնչի հայերեն թարգմանութեան ետեփեսոսյան ընթացքը: Մ. Գրքի «ստույգ» կամ «ճշմարիտ օրինակներին» վերաբերյալ տեղեկութիւններ վկայում է այն մասին, որ Աստվածաշնչի կրկին թարգմանութեան խնդիրը

47 Նույն տեղում, էջ 342-343: Եփեսոսի Գ Տիեզերական ժողովը Նեստորին զրկեց Կոստանդնուպոլսի պատրիարքի (428-431թ.թ.) աթոռից (տե՛ս Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցույ Յուղղափառ և Սուրբ Հոգեկիր Հարցն մերոյ դաւանութեանց, Յաւուրս Կոմիտաս Կաթողիկոսի (613-627 թ.թ.) համահաւաքեալ, հրատարակութիւն Եպս. Տէր-Մկրտչեանի. Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 126, The Cambridge Medieval History IV: The Byzantine Empire, Cambridge, 1966, p. 20, 56, 78): Ինչպես նշել է Ե.Տեր-Մինասյանը, հայերը զգուշացված լինելով Թեոդոր Մոպսուեստացու եւ Նեստորի մոլորութիւններին մասին, «իրենց աշխատեցին հեռու պահել այդ գիտնականների հետևորդներին» (Ե. Տէր-Մինասեանց, նշվ. աշխ., էջ 64):

48 Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սուրբ Սահակ Հայրապետ Հայոց եւ առ Սուրբ Մաշդոց, Պատասխանի թղթոյն Պրոկղի երանելոյ, ի Սահակայ եւ ի Մաշդոցէ, սուրբ վարդապետացն Հայոց (տե՛ս Գիրք Թղթոց, Մատենագրութիւն նախնեաց. Թիֆլիս, 1901, էջ 1-8, 11-12):

49 Ե. Բ. Տէր-Մինասեանց, նշվ. աշխ., էջ 63: Հմմտ. Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչեանի Հայոց Եկեղեցու պատմութիւն. մաս Ա, Վարդապետ, 1908, էջ 191:

50 Ա. Ղարաբաղյան, Դավանաբանական պայքարը և քաղաքական կողմնորոշման հարցը քրիստոնյա Արևելքում և Հայ Եկեղեցին (Դ-Ձ դդ.): Ատենախոսութեան սեղմագիր, Երևան, 1995, էջ 11:

51 Նոսքը մինչ Եփեսոսի ժողովը Եղեսիա և այնտեղիո Կոստանդնուպոլսի գնացած և Եփեսոսի ժողովից հետո Հայաստան վերադարձած Եզնիկ Կողբացու, ինչպես նաև Բյուզանդիայում նրանց միացած ընկերների մասին է: Նորենացին գրել է. «Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտաց, որոց անուանքն Ղևոնդ և Կորիւն կարգային յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բյուզանդիոն: Ապա ելանեն անդր Յովհան և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և Մեսրոպայ» (Կորյուն և ն, էջ 341): Կորյունն այս նույն իրադարձութեան մասին գրել է. «...ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, զիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդն՝ Կորիւնս, և մատուցեալ յարէին յԵզնիկն, իբրև առ ընտանեգոյն սննդակից ի Կոստանդնուպոլսեան քաղաքին, անդ միաբանութեամբ Հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն և բառում շնորհազիր Հարց յետ այնր աւանդութեամբք, և Նիկիական և Եփեսոսական կանոնօք, գային երեւելով աշխարհին Հայոց, և առաջի դնէին Հարցն զբերեալ կտակարանսն Եկեղեցու սրբոյ» (Կորյուն և ն, էջ 123-124):

52 Մովսէս Խորենացի, էջ 342: Կորյունի մոտ համարյա նույնութեամբ հանդիպում ենք այդ արտահայտութեանը. «ճշմարիտ օրինակօք...» (Կորյուն և ն, էջ 124):

ծագել էր ոչ այնքան արդեն կատարված թարգմանության անբավարար որակից, այլ բնագրի ոչ ամբողջական տեքստի ընդգրկումից, ինչը ստիպել էր, որ Աստվածաշնչի թարգմանության սկզբնական փուլերի արդյունքը պատմիչները բնութագրեին որպես «զփոխանակի զթարգմանութիւնս»⁵³ կամ «թարգմանեալն փոխանակի»⁵⁴: Ս. Գրքի «ճշմարիտ օրինակների» կամ «ստույգ օրինակների»⁵⁵ վերստին թարգմանությամբ իր ավարտին էր հասցվելու Աստվածաշնչի թարգմանության վերջին՝ ետեփեսոսյան շրջանը, որի երկրորդ փուլի մասնակիցներից է եղել նաև Մովսես Խորենացին:

ОБ ЭТАПАХ АРМЯНСКОГО ПЕРЕВОДА БИБЛИИ

НОРАЙР ДАНИЕЛЯН

Резюме

После провозглашения в Армении христианства государственной религией (301 г.) вопрос перевода Библии на армянский язык стал актуальной задачей. Начиная с XVIII в. разные вопросы, связанные с армянским переводом Библии, исследовались несколькими поколениями арменоведов. Исследования концентрировались в двух направлениях: (а) внешние обстоятельства армянского перевода, (б) анализ армянского перевода. В статье на основе раннесредневековых армянских источников анализируются вопросы перехода от устного к письменному переводу, их периодизации и некоторых терминов, касающихся процесса перевода Библии.

⁵³ Կ ո ղ յ ու ն, էջ 124:

⁵⁴ Մ ո վ ս ե ս Խ ո ռ ե ն ա ց ի, էջ 343: Թովմա Արծրունու տեղեկությունը սաղմոսների մասին «զհին թարգմանեալսն» (Թ ո վ մ ա Ա ը ժ ը ու ն ի. Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանյանի. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 103) վերաբերում է ոչ թե նախամեսրոպյան, այլ փոխանակի հայերեն թարգմանությանը (տե՛ս Զ ա - մ ե ն վ ա ը ա պ ե տ. Նախնական ժամերգությունը. - «Մասիս», Կ. Պոլիս, 1896: Հ. Ա ն ա ս յ ա ն. Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը. - «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, 1966, էջ 76):

⁵⁵ Նորայր Բյուզանդացին, հետազոտելով սկզբնաղբյուրների հաղորդումները, եզրակացրել է. «Հաւանական է որ Եզնիկ եւ Հինգ ուսումնակիցք իւր յետ իբր երեքամեայ վարժից յոյն լեզուի ի կայսերական մայրաքաղաքին խմբովին մեկնած են ի Կոստանդնուպոլէ յամին 434 եւ դարձած ի Հայս առ իւրեանց վարդապետս, պարգեւ ըրելով նոցա յառատաձեռնութենէ Թէոդոս Բ կայսեր եւ Պրոկղ պատրիարքէ, որ յաջորդեց Մաքսիմիոսի յետ սորա մահուանն 12 Ապրիլի 434 տարւոյ (Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. 99 ա. ծան. 3)- ընտիր ընտիր յոյն ձեռագրեր, յորոց ղլխավորքն էին Հին եւ Նոր Կտակարանայ օրինակք...» (Ն ո ը ա յ ը Բ ի լ զ ա ն ը ա ց ի. Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնը, Գիրք Մակարայեցւոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս և Փաւստոս Բիւզանդ, Տփղիս, 1900, էջ 4): Հետազոտողը չափազանցված է ներկայացրել հատկապես Թեոդոս Բ-ի «առատաձեռնութիւնը», քանզի Ս. Գրքի «ստույգ օրինակների» կապակցությամբ նա չի հիշատակված ոչ Կորյունի և ոչ էլ Խորենացու կողմից:

ON THE PERIODIZATION OF
THE ARMENIAN TRANSLATION OF THE BIBLE

NORAYR DANIELYAN

S u m m a r y

After the proclamation of Christianity as the state religion in Armenia (301 AD), the translation of the Bible into Armenian became a very real problem which was solved at the beginning of the 5th century by St. Mesrop Mashtots' invention of the Armenian alphabet (405 AD). Since the 18th century different questions connected with the Armenian translation of the Bible have been studied by several generations of Armenologists. The studies were concentrated in two directions: (a) the external circumstances of the Armenian translation, (b) the analysis of the Armenian translation. The questions of transfer from the oral to the written Armenian translation, their periodization and some terms concerning the process of translation of the Bible are analysed in this article on the basis of the early medieval Armenian sources.